ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստmailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«1» սեպտեմբերի 2017 թվականի N21

ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Սայադյանի կողմից ծառայողական պարտականությունների որակյալ կատարումը՝ կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Սայադյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ տալ միանվագ դրամական պարգևատրում՝ 120 000 դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2017 թվական, սեպտեմբերի 1
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շաուլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«25 » սեպտեմբերի 2017 թվականի N22

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ «ՄՈՎՍԵՍ ՏԵՐ-ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1239-Ն որոշումը և հաշվի առնելով ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Խաթուն Հակոբյանի դիմումը՝ *կարգադրում եմ.*

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Խաթուն Հակոբյանին հոկտեմբերի 2-ից տրամադրել իրեն հասանելիք 2017 թվականի արձակուրդը՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Խաթուն Հակոբյանին աշխատանքի մեջ համարել 2017 թվականի նոյեմբերի 6-ից:
3. Նրա աշխատանքային պարտականությունները դնել երաժշտության դաստիարակ Լուսիկ Սաֆարյանի վրա:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2017 թվական, սեպտեմբերի 25
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«1» սեպտեմբերի 2017 թվականի N 25

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 86-Ն, 2017 թվականի հունվարի 11-ի N5 որոշումը՝ որոշում եմ.

1. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի հանգուցյալ բնակիչ Հովհաննես Ապետի Աբրահամյանի թոռանը՝ Արման Աբրահամի Աբրահամյանին՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2017 թվական, սեպտեմբերի 1
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» սեպտեմբերի 2017 թվականի N 26

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի N 28 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հաշվի առնելով թույլ տրված տեխնիկական վրիպակը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի 2011 թվականի հուլիսի 21-ի «Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված համարելու և շինանարության թույլտվություն տալու մասին» N 28 որոշման 1-ին կետի «0.1856 հա» բառերը փոխարինել «0.1 հա» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2017 թվական, սեպտեմբերի 25
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» սեպտեմբերի 2017 թվականի N 27

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ Մ. ՄԿՐՏՉՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արտավազդ Աղբալի Աբովյանի կողմից լիազորված Արտեմ Արտավազդի Աբովյանը դիմել է ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարան՝ Արտավազդ Աբովյանին սեփականատիրության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության վկայական N 2094984, տրված 15.12.2005թ. «Մաչանյան Կարեն» ԱՁ-ի /որակավորման վկայական 0244/ կողմից տրված չափագրությունը և եզրակացությունը/ ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Մ. Մկրտչյան փողոցի թիվ 8 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում իր կողմից ինքնակամ կառուցված բնակելի տունն /արտաքին մակերեսը՝ 45,3 քմ, ներքին մակերեսը՝ 33,3 քմ/ օրինականացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով, որոշում եմ.

1. Քաղաքացի Արտավազդ Աբովյանին սեփականատիրության իրավունքով պատկանող Մուսալեռ համայնքի Մ. Մկրտչյան փողոցի 8 հասցեում գտնվող իր կողմից կառուցված ինքնակամ 1 հարկանի բնակելի շինության ընդհանուր մակերեսը՝ 54,3քմ, օրինական՝ 9քմ, ապօրինի շինության արտաքին մակերեսը՝ 45,3 քմ, ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար սահմանված 95 130 / իննսունհինգ հազար հարյուր երեսուն դրամ / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Նշված շինությանը տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Մուսալեռ, Մ. Մկրտչյան փողոց, թիվ 8:

4. Սույն օրենքից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2017 թվական, սեպտեմբերի 28
գ. Մուսալեռ